


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ
զրույթ ինչ պետք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ ԳՐԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (ԽՈՒՆԱԿԱՏՈՂԻ)
ԹԻՒ

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boîte Postale No.



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դանկ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՆԵՐ ԿԱՆՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարհութեան վրայ է:

Խոնարհութեան ուղղուած
գրութիւնք ևս չ'են տրուիր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կանխիկ վճարելի են

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԲԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.

Մեր տառապեալ Հայոց այժմու ազնորութիւնը կացութիւնը ամէն հայ լեզուի, հայ սրտի, և ամէն հայ գրչի ողբերգութեան սրտածմբիկ առարկան եղած է. զոր շարունակ կ'ըսենք, ու կուլանք. այլ սակայն ոչ ըսելէն կը ձանձրանանք և ոչ լսելէն կ'ամօնանք. վասնոր շարունակ ըսելը զրախօսութիւն և լալը ամօթալից փոքրագուծիւն մ'է:

Քաջը չի՛ լար, այլ կը մեռնի. առարկան չի՛ զրախօսեր, այլ ինչ որ կրնայ, այն կ'ընէ. և ահա երկուքին մէջն ալ պարտաւորութիւնը լրացեալ է, և երկուքին մէջն ալ սէրը կը յաղթանակէ. ասոնք մեծ ազգի մը շնաշխարհիկ յատկանիշներն են, զոր երբեմն ունէինք, և վերջերս դժբաղդաբար կորուսինք, և եղանք զրախօս ու լալիւն:

Այս ցաւալի կացութիւնը դժբաղդաբար հանդերձալէ մեր մեծապանծ ազգութիւնը, և ընկերական կենաց առաքինութեան ամէն պայմաններովն կատարելագործեալ սրբափայլ կրօնքը, և աշխարհի հրաշագեղ գրախօս եղող մեր սիրեցեալ Հայրենիքը կործանել, և անյիշատակ թողուլ:

Ո՞վ ցաւոցս, մեր անուղբ ճակատագրին վրայ վայրագ տիրապետութեան, և ազգակուլ շահամուլութեան ներգործութիւնը իտպաւ կորստեան գահալէժն հասած ըլլալով, հետը բերած է իւր արգահատելի ճգնաժամն. և այնու անխուսափելի պարտուց վերջին հրաւերն կը կարգայ ամէն հարազատ հայու, որ իւրովսանն գոնէ կաթիլ մը ջուր սրսկէ հայաճարակ հրեհին վրայ, դիտնալով որ թէն մէն մի կաթիլ անուղբ է ըստ ինքեան, բայց կաթիլներու շարունակելի միութիւնը կրնան գետեր կազմել:

Միտելի Հայեր, ամէն օր, ամէն ժամ, և ամէն վայրկեան մեր ողորմելի Հայրենեաց ամէն կողմերէն աղեխարչ հեծեծանքներ կը հասնին մեր ականջին, և օրըստօրէական սոգն ու կոտորած, և անխիղճ աւերածութիւն կը յօշոտեն մեր բոլոր ազիքներն և մեզ կը յիշեցնեն մեր Եղիշէ պատմագրին սա գերեզմանական հառաչանքն թէ՛ «Մեր սիրելիներէն ետքը ինչ պէտք է մեզի կեանք»:

Այս և առաւել քան զայս մեր աչքի առջեւ ունենալով, պէտք է աջ ձեռքերն սրտերնուս ձախ ձեռքերնիս ճակատնուս վրայ դնելով խորհինք որ, եթէ այժմ այս պահուս ներքի է խուսել այս սրբազնագոյն պարտաւորութենէն, զոր շնչասպառ կը պահանջէ մեզմէ մեր տառապեալ հայրենիքն, և եթէ նոյն իսկ մեր եղբարց, հարց, մարց և քերց արատաւքն կոխտուելով անցնինք մենայն անզգայութեամբ և պարտազանցութեամբ, և այսպէս մեր հայրենակցաց ահեղագոյ աղաղակներուն գէ՛մ մարմարէ արձաններ գառնանք, որուն սպառաժներն անգամ չ'ին հանդուրժեր տանիլ, ուրեմն ըսէք — եթէ ոչ այժմ, ապա ե՛րբ, ո՛ւր, և ո՛րպիսի — :

Յուշ ձեզ հայոց ժողովուրդ, որ ձեր հայրենեաց կործանմանը գէ՛մ ճակատնուս վրայ անտարբերութեան մուրը քսած, եթէ դեռ երկար աստի վարանիք, օր մը ո՛չ հայ, ո՛չ հայրենիք, ո՛չ եկեղեցի, և ոչ եկեղեցական չ'պիտի ունենաք. այլ ձեր յաջորդներուն ազգատուճը պիտի սկսի Գերմանական, Գաղղիական և Անգլիական յորջորջմամբ:

Ուստի եթէ Հայկայ արիւնէն կաթիլ մը ունիս երակիդ մէջ, կրօնից և ազգութեան զգացումէն շամանդաղ մը մնացած է սրտիդ մէկ անկիւնը, և եթէ մեծ ազգի մը յաջորդն ըլլալու անձնապատուութիւնը կը կրես, պէտք է դիտնաս թէ, մահամերձ է հիւանդնիս, հետեւաբար հարկ անհրաժեշտ է զերծ ըլլալ ազգի ազգի նկատումներէ, և ամէն կողմնակալութենէ, որ մարդոց կատարելութիւնն, և եղբայրութեան մահաւանդ մարդկութեան արդար պահանջն է. և ընել, ինչ որ կրնանք, և չ'զլանալ ինչ որ մեր բնական կարողութիւնը կրնձեռն մեզ, և ասկէ՞ աւելին, այն ալ մեր ծախատագրին, կամ որ ճշմարիտն է Աստուծոյ արագահաս օգնութեանը թողուլ, որ տկարին՝ հարստահարելոյն, և յուսահատին վերջին դաւանանքն, և խարխիսն է հաւատոյ :

Արդ ըստ որում մեր առ այս ունեցած մեղադրելի անտարբերութիւնը փորձով տեսնուեցաւ, և անխոխարհելի վնասներուն ականատես գտնուեցանք, և այսօր մեր խղճի գուռը կը բաղնեն յանուն եղբայրութեան, արեւակցութեան և հայրենեաց. չ'ըլլանք անուղբ անոնց գէ՛մ, ինչպէս որ մէջը մարդ չ'եղած տան մը դուռը կը բաղնեն, ու բացուլ մը չ'ըլլար. այլ յօժարակամ նուիրենք գոնէ հին լալ մը,

չորարեկ հացի մը կտոր, սրտին պապակը զովացնող գաւաթ մը ջուր, կամ լուսնայ մը, և կամ ինչ որ կրնանք, կամ ունինք. այս քիչ երեցածը ահագին քանակութեամբ մեծեր կը կազմէ, և քիչերով է որ ազգ մը մեծամեծս կը գործէ, ով որ այս սկզբունքին կը հետեի, կ'ըլլայ ազգային ճշմարիտ անհատ մը, պատուական հայ մը, և յարգելի մարդ մը:

(շարունակելի) II.

ԲՈՒՐԳԵՐԻՑ ԳԷՊԻ ԷՅՅԷԷ

Անապատային սապ ու խիտ մթնոլորտը, որ ճնշում է իւր ցած երկնքով խեղճ բնակիչներին, մտնաւոր Հայաստանի գոգին, ցօղին վարժ, խեղճ սարագիր Հայերին, աւելի ծանրանում էր ինձ և. անտանելի իրաւունք թանի ստեղծում են իմ մեկնելու օրերը, և վերջապէս այդ օրերին ստեղծակցութեամբ ծագեցաւ վերջացող անկի վերջին օրուայ մէջ յորում ևս թողած շատ ծանօթներ, որոց մէջ ևս ազնիւ սրտի աէր մտերիմներ, վերջին պիտուր հրատեչտով ինքզինքս նետեցի կապի մը մէջ ուղեորելու մինչև երկաթուղայ կայարանը. ուր այդուս ինձ թուում էր թէ չ'պէտք էր երեւային Արարական սեւ ու կեղտոտ գէ՛մքեր. կոպիտ շարժումներ ու անակի աղմուկներ, որոնցից վաղուց ձանձրացել էի Գահիրէում, բայց բանը ազգայն չ'էր, իմ մեկնելու ուրախութեան Գահիրէի խեղճ կլիմայից և կրած պիտուր սպառնալիքն իմ բարեկամներից բաժանումս հաւաք, սրբափա և ուղեղիս մէջ մի տեսակ հակախտնում գոյացած մտացնել էին տալիս ինձ ճանապարհն ու Աղեքսանդրիան, և մինչև չորեքուս իմ հաւանաբար վարելու կենցաղը դարձեալ արարական երկրի մէջ. և այս հիասթափումը չը յապաղեց, վասնոր հոգի ինքզինքս կատարելի վազոնի մէջ նետելով կը հանգստանայի, ահա արար մի կին սեւ մետաքսեայ սաւանի մէջ պարուրուած եկաւ. և ճիշտ գիւնացս նստաւ. մի ուրախ երիտասարդ նրա քով մի ուրիշն ալ աջ կողմումս, և ու կինը պատուհանի առջև գէ՛մ առ գէ՛մ գտնուելով բնականաբար պատճառ և զիբուրութիւն ունէինք զիբար աւելի զիբուր. քան ուրիշներ. Կայարանի աղմուկն ու իրարանցում շատ հանրածանօթ են հետեւաբար և աւելորդ գրելու. իսկ ինչ որ ինձ հետաքրքրում էր ևս նորութիւն ևս կամենում եմ գրել « Արշարչախ » ինքեցողներին:

Գնացքը շարժեց և ասիոնբու, մահ սկսում էր. ձայները վերջապէս մ'ուան հարիւրաւոր անիւներու կոկոսցին մէջ, ու մենք յառաջանում ենք վերջին անգամ զննելով Գահիրէի շէնքերը, որք արագ կերպով պահեցին իրենց գոյութիւնը, սեղի սալով մը:

տականաչ և ցանցատ ծառատունկներու հիւ-
րընկալ անհուն ըստելու չափ ընդարձակ մի
զայտի , որու ծոցում լայն ու նեղ ճիւղերով
օժապտոյտ սողում է հոչակաւորն Նեղոս . Ե-
զիպտոսի իսկապէս կեանքը . և մենք քանիցս
նորա վրայով անցնում ենք յառաջ , նկա-
տելով տեղ տեղ հին նահապետական ջրհան
անիւներ , զորս դարձնում են եզեր . տեղ տեղ
ալ ուղտ , եզ և էջ հաւասարապէս օգնում են
երկրագործի աշխատութեան . թող թէ շատ
անգամ ալ էջը յծուում է ուղտին հետ և
մի ծիծաղելի ընկերութիւն կազմում և տես-
նողին ծաղրը շարժելու հետ շարժում է զըն-
նողին և ևնտմել արարական հնարաւորու-
թեան վրայ , որը խիստ տարբերում է Հա-
յաստանցի շինականի մտաւոր մակարդակից
չառ ու շատ երեւոյթներում . յորում կարելի
է առաջին տեղը սալ արարական մտաւոր
կարողութեան :

Անցնում են անորոշ բոպէներ և կօն-
սիբօրը գալիս է տոները քննելու . որ ա-
ռիթ է դառնում քոլս նստող վաւաչստ ա-
րարին , քծնօրէն իմ գիւնացի կնոջ տունն ստա-
նալով քննիչին ներկայացնելու և վերադար-
ձնելու . և այս առթիւ կնոջ հետ ընտանի-
ցութեան սկսելու , որում պատասխանում է
կինը՝ մի կեղծ անօթխածութեանը որ սակայն
չէ վերաբերում ուշադրի աչքերից :

Երկրորդ կայարանում կնոջ տունն առ-
նում է կօնսիբօրը , որով յայտնում է թէ
կինը պէտք է դուրս գնայ երրորդ կայարա-
նում , իսկ քծնող արարի տունն տեսնում եմ
Ալէքսանդրիայի հաւար է : Բայց ի՞նչ մեծ
է լինում գարունըս , երբ երրորդ կայա-
րանում դուրս են գնում . մեկնում , թէ՛ կինը
թէ՛ արարը որ պէտք էր գնար Ալէքսանդրիա
եղելութիւնն այժմ յայտնում է խիստ պարզ ,
ճանապարհում նոքա մի քանի խօսքով հաւա-
ճայտեցան սիրային արշաւանք մը կատա-
րել , ժողովակի , գրաւի և յապաղան կորուստ
ընաւ նշանակութիւն չ'ունեցաւ արարի մը հա-
մար որ ճամբորդ էր . ճանապարհի վրայ և
կին մը , երիտասարդ , գիրուկ և բաւական
գեղադէմ , շատ մաքուր հագւած և զարդար-
ւած , ըստ երեւոյթին ոչ կարօա . երբէք չը
մտածեց ոչ մի բան պատուոյ կամ կրօնի ու
մեղքի տեսակէտով . ու առաջին սիրային գէպ-
քը չի կորցրեց շահու կամ հաճոյքի տեսա-
կէտով . և ես սկսայ մտածել արդէն տեսած-
ներս ալ միտախն խոտնելով , թէ արդեօք Ե-
զիպտոսը աշխարհի արեւմտաւորն անբա-
բոյական երկիրը չէ՞ , քանզի վերու նկարա-
գրուածի զանազան տեսակներն արեւն օր , արեւն
տեղ կրկնում են եզիպտական գրեթէ բոլոր
ցեղերի մէջ . սա տարբերութեանը միայն , որ
երբեմն ցեղեր այդչափ պարզ ու յայտնի
չեն դուրս գալիս այդ խայտառակ վարքում
և շրջագայած լինելով Ե-7 պետութիւնների
զանազան քաղաքներ , չեմ տեսել երբէք այդ
չափ բաց ու հաղարձակ անբարոյակաւորութիւն
նոյն իսկ Ռուսներու , որի հաւար ունեք
աշխարհի պոռնիկանց անունն են սալիս , բայց
երեւի նոքա եզիպտական երկրի խապառ ան-
ճանօթներ են լինում : Հապա ի՞նչ բսել 10
սարկական պոռնիկների մասին և 12 կամ 14
սարկականներ , որք մայր են գտնում , գա-
ւակներ ունեն : Եւ արարը առնատարակ ու-
նենում է միշտ մէկէ աւելի կին . և այնչափ
բազմացնում է իւր կանանց թիւը , որչափ
առատանում է իւր աշխատանքը կամ վաս-
տակը : Ես իրացայ Գահիրէում որ մի արար
ծառայ ազաչում է իւր տիրոջ մի քարիֆա (20
փարայ) աւելացնել օրականը , որպէսզի կա-
րողանայ մի չորրորդ կին ևս առնուլ , ինա-
նում էք , օրական 20 փարայով գո՛հ է լի-
նում մի կին և մէկ արար սպրեցնում է մի-
ջին հաշւով չորս կին ու իւր ազգին ան-
զամներ աւելացնում . . .

Չարմանալի պարզութեան մի օրինակ
է երեւում յանկարծ , պարզ ու բարեմիտ . մի
երիտասարդ արար շուր է խնդրում ունեցող-
ներին և ահա իսկոյն մի քանի տեղից սա-
փորներ են բարձրացնում , արարը իսկոյն սա-

փորներից մին աննկով բարձրացնում , խոն-
է առանց բաժակի , և յետոյ տալիս է իւր ըն-
կերին , ու այսպէս բոլոր ծարաւներ անխա-
րօքէն , առանց նկատելու ջրի օրպիտութիւնը ,
արեւնի կեղտոտութիւնը , վայելում են Աս-
տուծոյ ջուրը , առանց մտածելու թէ արդեօք
հիւանդ կամ ախտաւոր մի մարդ չէ՞ խոն-
այդ արեւից , թէ արդեօք մի քորոպներ չեն
պատել սափորի եզերքը , յետոյ ինքն իսկ
կրնայ վարակուիլ , երբէ՛ք իսկ մենք , հիւան-
գութեան և վարակւան հնուտ լինելով , քանի
քանի՛ անգամներ ծարաւի անօթի ենք մնում
յանուն գիտութեան , չէ՞ք մտածում ընթեր-
ցողներ : Բայց յառաջանալով , դեռ նոր տեսա-
րաններ կան . ահա անցնելով երկաթեայ կա-
մուրջով նեղուսի վրայից , կանգ ենք առնում
մի այլ կայարանում , աղայ , աղջիկ պաշարում
են վազոնները , նրանք ներկայացնում են , խո-
րոված թուշուներ , թուղ , հաց եւլն . խիստ
ձեւաւոր գատուած կեղտոտ ու գարշելի արան-
ներում . բայց արարը երբէք սովոր չէ մար-
բութեան վրայ մտածել , ո՛չ անօթի և ո՛չ
կուշտ ժաղանակի մէջ , հազուաւ կապուստ
նրա հաւար իրենց հնազարդ նշանակու-
թիւնն միայն ունին . մարմինը ծածկել , ճա-
շակ և պատշաճութիւն երբէք մուտ գտած
չեն արարի իրացականութեան մէջ , նրա
միակ նպատակն է սպրեւ և վայելել և
այդ անում է :

Մի երկու կայարան ևս ևս ճեպըն-
թացը հասնում է Ալեքսանդրիա , ուր զգալի
փոփոխութիւն կը կրէ ճամբորդն կլիմայի ա-
սակէտով , աւելի զով ու մարտը և սակաւ ինչ
խոնաւ հակառակ Գահիրէի չորութեան
Մ . ՀԱՅԿՈՒՆԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԻ
Տիար Ս . Պէլեան , Տէր և Տիկին Ե .
Պէլեան ներկայեւս կուզան իրենց խորին
չնորհակալիքը յայտնել ամեն անոնց , ու-
րոնք բարեհաճեցան իրենց զստեր նորափր-
թիթ

ՕՐ . ՆՈՒԱՐԻ Պէլեան
յուզարկաւորութեան հանդէսին ներկայ գտ-
նուելու :

ՀԱՌԱՉՆԵՐ

Գիտունք գարուց , արեւնայն .
Գուրբ չ'Աստուածոց ընդունայն .
Ունին ստանակ պէսպիսի ,
Եւ պաշտօնեայք Քրիստոսի :
Ինչպէս յայտնէ պատուութիւն ,
Այս բոլորին մերկութիւն ,
Ինչպէս գարու վկային ,
Դեռ շատ դիմող վրայէն :
Բայց այս արեւն մենք մարդիկ ,
Ժրպիտով մը վաղանցիկ ,
Մտապոռութեան կը թողունք ,
Իրբու բնական մի բերուենք :
Իսկ այն արուեստ պանծալի ,
Գերթողութիւն որ կոչուի .
Դա չ'է մարդոց կրթութիւն ,
Այլ նրէնքն է Արարչին :

Արդ՝ մի քերթող համբաււոր ,
Տեսնեմք իւր վարք կաւաւոր .
Է լի անարգ թիրութեանը ,
Վե՛ր պաշտօնի մը բեստը :
Թէպէտ անշուք է այդ գործ ,
Ինչպէս մշակ՝ երկրագործ .
Բայց այդ պաշտօն չ'է փառաց ,
Այլ խղճի է , պարզ արտած :
Թո՛ղ , հայրենի սէր անշէջ ,
Բաժին չ'ունի սրտին մէջ ,
Այլ մարդկութեան անկատար ,

Չ'օգնել մանկան՝ հէր , սկար ,
Որոնց՝ եղբարց՝ հաւարին .
Մատաչ տիոց իսկ վայելն ,
Կը մերմտրեն սրտեր բիւր .
Խուլ աշխարհի , մարդկանց՝ հիւր :

(ԱՌԱՅԱՐԿԵԱԼ ԲԱՆԱՍՏԵՂՆԸ)
Գաւ լիցի ևս փուճ հիւլէս ,
Հաւարձակիմ ուղղել քեզ .
Խրատ , յորդոր , կառ այլ խօսքեր ,
Ինչ ուղղելու հրաւէր :
Ժողովրդի այլ թարգման ,
Հանդիսանալ անազան ,
Այս սողերով կցկատուր ,
Սփոփելու խղճիս հուր :
Ո՛վ դու էակ զգայուն ,
Բանաստեղծի ՚ի հաւրուն ,
Այս չ'է պատիւ քեզ հաւակ ,
Ուղղե՛ վարքդ , թոյլ՝ լ'անարգ :
Գահիրէ S. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒԱԼ
Երևարդ Քէօչկիններքին բակին մէջ
հրդեհ մը ծագեցաւ : Հանգուցեալ Ղազի
Օսման բաշայի պզտիկ պալատը ամբողջու-
թեամբ հրոյ ճարակ եղած է :
Սուլթանը անձամբ օգնութիւններ ը-
րեր է :
— Արարիոյ Հարաւային մասին մէջ
սպտամբութիւն մը ծագած է :
— Եէմէնի վայելն սպաննուած է :

ՉԻՆԱՍՏԱՆ

Տեյի Էֆսքսի Շանկ - Հայի թըղ-
թակիցը կը հեռագրէ .
Յունիս 14ին՝ Փէքինէն եկող չինացի վաճա-
ռական մը հարցաքննելի որ կը յայտարա-
րեր թէ՛ իրեն մեկնումէն առաջ , ի բաց
առեալ Անգլիական , Աստրիական և Պել-
ճիգական գեապանատունները , միւսները
ամբողջ այրուած են . նոյն թղթակիցը Փէ-
քինէ գաղտնաբար փախած մանտարինէ մը
կը տեղեկանայ թէ՛ քաղաքին հիւսիսային
արեւմտեան թաղին կէսէն աւելին այրել է .
իչխան թիւան և կայարանին կը պատրաս-
տուին Շանգիի նահանգը երթալ : Չինական
գրահաւոր մը յաջողեցաւ միացեալ նաւա-
տորմներու ուշադրութեան վրայիլ և եր-
կու միլիոն փամփուլտ հանել նանքին :

Թագուի բերդերէն փախչող Չինացի
զինուորները յաջողեցան միանալ թիւն -
Չինի չինական զինուորներուն հետ :
Երեկ ճարտական զինուորներուն հրա-
մանատարը իւր շովատին գլուխը անցած
թագուի բերդերէն միոյն մէջ կը մտնէր .
չինացիները յարձակեցան և գլխատեցին
զայն Յետոյ աննկարագրելի ջարդ մը տեղի
ունեցաւ՝ որուն մէջ չինացիներուն կորուս-
ար 2000 էն աւելի է :

Չինացի հրամանատարը իւր պարտու-
թեան վերջ , ջարդեց իր ընտանիքը ու յետոյ
անձնասպան եղաւ :

ԹՐԱՆՍՎԱԼ

Գաւէն Թայնը , Մայիս 23 թուականաւ
Մակէրթօնթէնի իւր թղթակիցէն ընդունած
յաջորդ հեռագրերը կը հրատարակէ .
Երբ « Տրգրա » գաղթային գունդը Մա-
կէրթօնթէնը կը թողուր պատերազմին վայ-
րը երթալու համար , Պ . Լօկան՝ Բարեյոււոյ

գլխի խորհրդարանին մէջ երեւոյթան և Բոտրոսեան կուսակցութեան անդամ, մեծ- ախիթ թնդանօթ մը նուէր ըրաւ գունդին :

« Ձեր թնդանօթը շատ լաւ գործ տե- սաւ, կ'ըսէր և հանդէպ գունդին ձեր ու- նեցած բարեացակամութեան համար ձեզի շնորհակալ ենք »:

Պատկառելի Պ. Լօկան՝ գնդապետին պատասխանեց. « Ուրախ եմ որ թնդանօթս ձեզի օգտակար եղած է. մաքսիմով սպան- նուած իւրաքանչիւր ապստամբին համար անդլ. ոսկւոյ պարգև մը պիտի վճարեմ, բայց գերի բռնուածներուն համար 20 0)0 դեղ մը պիտի ընեմ »:

Տէյլի Մէյլի իր Պէտօմֆօնթէնի թղթա- կիցէն ընդունած երկար հեռագիր մը կը հրատարակէ, որ կը պարունակէ Պ. Գուլթի գաշտային հիւանդանոցներուն կազմակեր- պութեանը վրայ ըրած լուրջ ամբաստա- նութիւնները : Այս ամբաստանութիւնները մեծ յուզում պատճառեցին : Հարցապնդ- ման մը մէջ հանրածանօթ վիրաբոյժ Պ. Թրէվըս մերժեց հաւատք ընծայել ատոնց :

ՀԱՊԵՆՍՏԱՆ

Գանի մը իտալացի գործաւորներու գալուստը ձիպութիի հանդարտութիւնը վրդոված է, նոյն իսկ կ'ըսուի թէ՛ տեղա- ցիները պիտի ապստամբին եւրոպացիներու դէմ : Ձեռք կրնար հերքել և ոչ հաստա- տել այս լուրերը, կրնէ տեղական թերթ մը Թրանսական դեսպան Պ. Լակարտի մեկ- նումը ապացոյց մ'է թէ՛ ոչ ձիպութիի մէջ և ոչ չըջակաները այդպիսի լուրջ խու- վութիւններ գոյութիւն ունին :

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ

ԲԻՐԱԿԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ ՄԸ. — Մայիս 1ի գիշերը Բիւրտերը յարձակեր են Ուրմիոյ Գերման որբանոցին վրայ. հրացաններ են, առանց կարենալ վիրաւորելու, վարժուհի մը և սպասաւոր մը. հայ կին մը չարչարեր են, և գորգեր ու զգեստներ յափշտակեր են : Բայց կարող չեն եղած ելլել վերնա- յարկը ուր կը կենային գերմանուհի ուսու- ցիչները և որբերը : Երջակաները այս ար- շաւանքին լուրը լուսելուն, անմիջապէս զինեալ քրիստոնեաներ և իսլամներ կը համին ոճրագործութեան վայրը, և աւա- րակներուն ետեւէն իյնալով 16 ը կը բռնեն ու կը բերեն բանտարկել կուստն : Թեհրա- նի Գերմանական դեսպանը բողոքած է Պար- սիկ կառավարութեան, ոճրագործներուն պատժուիլը պահանջելով : Պարսկական իշ- խանութիւնը խիստ հրամաններ զրկեր է Ուրմիոյ իշխանութեանց, զերեւոյթ պատաս- խանատու ճանչնալով ո՛ր և է նոր դէպքի համար : Զինեալ 40 հոգի որբանոցին պար- տեգր կը հսկեն գիշեր ցերեկ :

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎՆ ԱՆԳՈՒՄ — Բ. Խոփըր ամենա- մեծ պատիւներով ընդունուեցաւ Լոնտոնի Կիլտօնի մէջ, Լորտ Սալզպուրին ընդունե- լութեան ներկայ էր : Քաղաքացիական ի- բաւունքը սակե՛ գզրիկի մը մէջ Դեր- կայացուեցաւ ն. Բարձրութեան :

Խոփըր իւր շնորհաւորական ճառին մէջ այն համալուր յայտնեց թէ՛ իւր այցելու- թիւնը Մեծն Բրիտանիոյ մէջ գոյութիւն ունեցող լաւ յարաբերութիւնները ամբա- ցնելու և երկու կառավարութեանց միջեւ վաճառականական յարաբերութիւնները զարգացնելու պիտի ծառայէ :

Խոփըրն այս խօսքերը ծափահարու- թիւններով ընդունուեցան :

— Թագուհին Ն. Բ. Խոփըրն շնորհեց Վիգթորիայի պատուանշանին մեծ խաչը, և Բրէնս Մոհամէտ Ալիին Ս. Միքայէլի և Ս. Գէորգի պատուանշանին մեծ խաչը :

— Հնդկաստանի սովեալներուն ի նը- պաստ կազմուած յանձնաժողովն որոշեց որ հանդանակութիւնը ընցածին պէս, նոր գումարներ հաւաքելու միջոցները պիտի քննէ, Շարաֆ ինքնէն զնաւուող հողագործ- ներուն օգնութեան փութալու համար :

ՅՈՒՂԻՍ 14 Ի 80ՆԸ — Յուլիս 14 Ի տօնը այս տարի չ'պիտի կատարուի Գահիրէի մէջ :

Այս տօնին կազմակերպիչ մասնախում- բը իւր ամբողջ պատրաստութիւնները ը- րած էր գիշերային հանդէս մը տալու համար Օթէլ Շէփերտսի պարտէզներուն մէջ, ո- րուն Տնօրինութիւնը ամենայն հաճոյակա- տարութեամբ մասնախումբին տրամադրու- թեան տակ դրած էր : Այս տօնին ծախքի- ըր գոցելու համար հանդանակութիւն մը կատարուած էր, որուն ամենայն փութա- ջանութեամբ մասնակցած էին ֆրանսական գաղթականութեան անդամները, բայց բազմաթիւ անձնաւորութիւններ մեկնած ըլլալուն և կամ յուլիս 14 էն առաջ մեկ- նելուն համար, հարկ եղած պատրաստու- թիւնները ընդհատուեցան :

ԲՐԷՆՍ ՍԷՅՅԷՏՏԻՆ — Բրէնս Ահմէտ Մէյքէտտիի դէպի անդրա մեկնումը՝ որ անցեալ երկուշաբթի տեղի պիտի ունենար ընկերակցութեամբ Տր. Հօփգիտի, յետա- ձգուած է բժիշկին տկարութեանը պատճա- րաւ : Այս դժբաղդ Բրէնսը իրաւ բազդ- չունի եղեր :

ՄԱՀ. — Ն. Վ. Մոհամէտ Բաթիպ փա- շա ամբողջ ընտանիքով Պուլիս գացած մի- ջոցին շոգեհաւին մէջ մեռեր է : Հանգուց- եալը 34 տարեկան էր և իտիվական ըն- տանիքէն իշխանուհոյ մը հետ ամուսնանա- լով եօթը զաւակ ունեցած է, որոնց հինգը մանչ են : Հանգուցելոյն մարմինը զմու- սուած և Պուլիս զրկուած է : Մոհամէտ Բա- թիպ փաշային քրոջ զուտորը՝ Իշխանուհի Յաթիմա Տէվլէթ Հանըմ, խնդրած է որ գիակը եզրպատու փոխադրուի :

ԶՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. — Զուրի ըն- կերութիւնը՝ Մաթարիայի և Զէյթունի ջուր հայթայթելու մենաշնորհը խնդրեց հան- րային շինութեանց նախարարութիւնէն : Այս վերջինը նպատաւոր կերպով պատաս- խանեց այս խնդրանքին :

ԳԱՐՆԱՔԻ ՏԱՃԱՐԸ. — Պ. Մասիէրօ, 1898 ին և 1899 ին Գարնաքի տաճարին նորոգման համար եղած աշխատութեանց վրայ մանրամասն տեղեկագիր մը ներկայա- ցուց հանրագումար շինութեանց նախարարու- թեան :

— Կը լսենք թէ՛ Աղզային Պատրիարքա- րանի թուրքերէն թղթակցութեանց պաշ- տօնեայ Տիրար Լեոն Շիշմանեան, վերջերս թողլով իր պաշտօնը՝ Գահիրէ եկած է և

քանի մը օրէն պիտի հրատարակէ ՍԱՀԱՅԻ- ՅԻ ՀԱՊԱՅԻՔ « Ճշմարտութեանց էջեր » ա- նունով թրքաստու կիսամեայ թերթ մը :

ՀԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՍԹ 6 ՅՈՒՂԻՍ 1900

557	3671	519	6163	6785	2309	4207
6395	264	8183	1890	2373	725	9990
3055	6927	7287	4775	4762	1725	3907
2812	8859	3708	8469	3033	8216	

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Թարու 3 Յուլիս. — Անգլիական և Ռուսական ծովակալները Թիէն-Չինը պա- շտպանել կարող ըլլալու գաղափարին յան- գեցան, բայց եթէ այս անկարելի ըլլայ՝ պի- տի ջանան այն ատեն Թարու Ֆնալ : 14000 չինացի զինուոր փէրինը Թիէն-Չինը կը բաժնեն :

Պուլիս 3 Յուլիս. — Գերմանիոյ կայսրը Չինաստան գացող զինուորներուն ճառ մը խօսելով ըսաւ թէ՛ մինչև որ փէ- քինի մէջ Գերմանական դեսպանին սպան- նութիւնը չը պատժուի, և մինչև որ տե- րութեանց դրօշակները չը ծածանին Չինու- մէջ, երեք հանգիստ չը պիտի ունենայ :

Շանկ-Հայ 3 Յուլիս. — Լուր կը չըջի թէ՛ փէրինի մէջ գտնուող ամբողջ եւրո- պացիները չարգուեր են :

Լոնտոն 3 Յուլիս, — Կ'երեկ թէ՛ տէրութիւնները-Միացեալ Նահանգներն ալ մէջը ըլլալով — այն գաղափարին յանգած են թէ՛ Չինաստանը պատերազմական վի- ճակի մէջ նկատելը քաղաքականութեան հակառակ պիտի ըլլայ, և թէ՛ աւելի լաւ է այս ճգնաժամը անկարգ զինուորներէն երկրորդուած ապստամբութիւն մը նկատել :

Փէրինի օգնութեան փութալու ակըն- կալութեան լուրը գէշ ապաւորութիւն թու- ղուց, թէպէտե տարակուսելի չ'է թէ՛ իւր- մեկիք ջուրը և տեղափոխութեանց միջոց- ները կը պակսին : Կը կարծուի թէ՛ միմիայն հազարակցութիւնները պաշտպանելու հա- մար 50,000 մարդու պէտք կայ :

Լոնտոն 3 Յուլիս. — Զորավար Սըր Հընթըր առանց դիմադրութեան Փրանք- ֆօնթը գրաւեց : Զորավար Կլէրի Կրէյլէն- կոթէր մտաւ :

Պոմպէյ 3 Յուլիս. — Անձրեկ ջուրե- ռու անբաւականութիւնը մտատանջութիւն կը պատճառէ :

Բարիզ 4 Յուլիս. — Թաքուէն կը հե- ոագրեն թէ՛ Յունիս 30ին փէրինի մէջ օ- տարականներու վիճակը շատ վտանգուած և դեսպաններն ալ պաշարուած են :

Բարիզ 5 Յուլիս. — Կը հաւաստեն թէ՛ ձարոն, օգնազօրքեր պիտի զրկէ ի փէրին, տէրութեանց պահանջումին հա- մաձայն :

Պուլիս 5 Յուլիս. — Նոր հասած հե- ոագրի մը նայելով, Շի-Փուի մէջ ա- պստամբութիւնը կը ծաւալի, Միացեալ Նահանգաց ծովակալը Ամերիկեան հպա- տակները ապահով տեղ մը պիտի փոխադ- րէ :

